


Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) — LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ԵՂԻՊՏՈՍ
Տարեկան դր. ողջ 30
ԱՐՏՍՈՒՄԱՐ
Տարեկան գրանգ 10

Փաճանագր. ՅԱԵԼՈՒՍՏ ԵՑՐՈՒ փոխարէն
վերաւճէ գրեմ պիտի ըլլան .

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱՐԵՐԹ

Փաճանագրութիւնը կանխիկ է, իսկ
ծանոցութիւնը կ'ընդունուին մասնա-
ւոր հաւանաւայնութեամբ .

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ նիւթական խնդրոց հարկար
պէտք է դիմել նմանաբանական հասցեով
քերթիս Մասակարարին, որ է՝

Փարս - Ներ - Խմբագրութեան
ԵՂԻՊՏԻ ՓՈՐՈՍԵՔՆ

ՊԵՐՏԻ ՓՈՒՓԱՅԻՆԱՆ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանա-
տու են իրենց զեւծներուն

ZUSC 20 ՓԱՐԱ ՈՂՁ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

«Արշալոյս»-ի համար օժանդակ
«Խմբագրական մարմին» մը
կազմուել որոշուած է՝ որը միեւնոյն
ժամանակ Գործադիր Ժողովը պիտի
ներկայացնէ արդէն ձեռնարկուած
«Հրատարակական Ընկերութեան» .
Փափաքողները մինչև առաջիկայ
կայ 908 Յունիս 5 ապահովագրեալ
նամակաւ պէտք է դիմեն «Արշա-
լոյս»-ի Խմբագրութեան հասցէին,
որ նոյնպէս ապահովագրեալ նամակ-
ներով պաշտօնի պիտի կոչէ զիրենք .
Ձեռքէ նամակ չ'ընդունուիր .
Փարտուղար - Ներկայացուցիչ
Ե. ՔՈՐՈՍԵՔՆ
24 Մայիս 908

քեւ մրափող առիւծը . մի՛ մոռնար
ամենի դազաններու ունեւորները,
երբ անդին քեզ կը դիւթեն հա-
զարաւոր թռչնոց քայքայուող եր-
գերը .
Տես՛, սա մարգագետինը՝ որ
հիասքանչ թաւաշմաման դորդի մը կը
նմանի, և որուն գրաւիչ տեսարա-
նին հանդէպ պահ մը կը մոռնանք
ինքզինքնիս . այս ա՛յն ուլասիան է՝
որ աշխարհի տափարակ անապատ-
ներուն մէջէն անցած առեն կը հան-
դիպի մարդ . Հոն է արծաթափայլ
վտակը իր կարկաչահոս և ուրուպը-
տոյս դժուարութիւններով . հոն կարե-
լի է գտնել պէս պէս ծաղիկներու
տերեւախիտ թփիկները, որոնք ա-
րարչագործութեան ներգաշնակու-
թեանց գոլթուր կը կարգան կարծես .
հոն շատ անգամ կերպէ սոխակը-
այդուն փառաբանիչը ստեղծողին,
չ'մոռնամ այն գեղեցուանուչ զեփու-
ւը՝ որ խանգակաթ մօր մը քնքուչ
մատներուն պէս շոյելով բոսորագեղ
վարդին թերթիկներն գրախտի մը
հանգոյն անուշաբոյր հոտերով կը
պարարէ հոտաւելիքներդ՝ դու այն
ատեն մտքով դէպի ելթեր կը սա-
ւառնիս բնութիւնէն ճաշկամ այս
առաւելութիւններուն համար գո-
հալթիւն յայտնել արարչին . բայց
դո՛ւ, ո՞վ յափշտակեալ . գիտե՛ս .
այդ կանաչազարդ գորգին ներքեւ
թունալից օձերու և զաղարի կա-
րիճներու բնակարաններ կան . Այդ
գեղեցկաւտեպիլ վայրը իր ծոցին մէջ
կը հիւրընկալէ հազարաւոր ֆլասա-
կար սողուններ, զեռիւններ և նոյն
իսկ երկդոտ նազաստակներ ևլն .

համար, ու ասոնք կը մնան միշտ
յաղթող տարերքներու մարտնչու-
մին դէմ . Չկայ ճշմարիտ օրինակ
մը մարդկութիւնը դօտիւզնուող,
որքան ժայռերու տեսարանը . Ար-
դարեւ այդ հսկայ ժայռերը բարոյա-
կան մարդը կը ներկայացնեն իրենց
անհուն գաղտնիքներով .
Բանական մարդ արարածն է
միայն այս տիեզերքին մէջ, որ կըր-
նայ կեդրոնացնել իր վրայ բարոյա-
կան վսեմ և հսկայ ուժեր, և կը
նմանի այն հրաշալի մեքենային,
ժայռերու պէս սոկուն, որուն առ-
ջև չարութեան և ատելութեան հը-
նարքները կը խորտակուին ու կը
խայտառկուին .
Վերջապէս բանական մարդն է
միայն, որ իր վրայ կը կեդրոնացնէ
բարոյն և չարին, սերոյ և ատելու-
թեան հակառակ տարբերը . Բայց
աւա՛ղ, միլիոնաւոր մարդիկ են որ
իրենց վրայ կեդրոնացուցած են մի-
այն չարն ու ատելութիւնը և այն
է իրենց նկարագիրը

և որչափ որ կը յիշեմ 25 տարիներ ա-
ռաջ տեղի ունեցած է սակայն ասիկ աւե-
լի լաւ պայմաններու տակ .
Բայց այժմ սոսկալի է դրուժիւնը,
քաղաքի շրջակայ գիւղերը ամբողջովին
թշուառութեան մատնուած են, ահաւա-
սիկ բազմաթիւ ստորագրութիւններ
կրող նամակի մը մասերը .
«Արդէն գիտէք որ այս տարի չա-
փազանց սղութիւն է ի զատ գործերն ալ
բոլորովին դադար են, արօր չունէինք՝
արօր գտանք . եզ չունէինք՝ կը ճարե-
ցինք, արտերնիս վարիցինք, բայց ի
դուր փճացած է արտերնիս
Գիւղացին՝ որուն զխաւոր եւ մի-
ակ ապրուստի միջոցը կըրկազորու-
թիւնն է, երբ կը փճանայ, ալ կրնանք
երեւակայել թէ ի՞նչ աստիճանի կրնայ
հասնիլ նոյն գիւղացիներու նիւթական
կարօտութիւնը, մարդ գիւղացի ըլ-
լալու է հասկնալու համար իսկական սո-
վի աղքատութիւնը .
«Ներկայ շաբթուա ցորենի կոտը
25-ըրջ . ի բարձրացած է կանխիկ, իսկ
պատուաւոր երաշխաւորութեամբ 35 զր-
գարին 15 զրուչ .
«Գիւղիս բնակչաց մեծագոյն մա-
սը թշուառութեան մատնուած, թո-
ղունք ուրիշ բազմաթիւ մեր գրացի
գիւղերը եւ մտածենք մեր վրայ առ այ-
ժմ, 80 սուրէն հազիւ 20 տուրը մերթ
ինքնօգնութեամբ, մերթ պատուաւոր
երաշխաւորութեամբ բաւարարութիւն
կուտան անժամանակեայ կերպով իրենց
ապրուստին, իսկ մնացեալները յետին
ստիճանի կարօտութեան մատնուած են .
Բազմաթիւ ու անվերջանալի նա-
մակներ կը տեղան շրջակայ բոլոր գիւ-
ղերէն տեղոյն սովը նկարագրող .
Շապիհն - Գարախիսար միեւնոյն
հայրենի ճիւղն է որ կողբայ, կը ճուայ,
ապաւինած հեռաւոր եղբայրներուն, ու
րոնք սակայն բաղաւոր վիճակ չունին
երկրէ երկիր սողակող սովի պատճա-
ռով, բայց աղաս երկիրներու մէջ
գարմանը շուտ կը հասնի, ժամանակն
է որ գիտակցինք, հեռուն քիչ մ'ալ հե-
ռու՛ն նայինք . ճայնը մեր եղբայրներէն
կուգայ որոնք անթիւ եւ մերկ՝ ցամաք
եւ չորաբեկ հացի պակասը կողբան, կը
փճանան անարգ բէթիմի ճիրաններուն,
եւ տիրող մահատարտոս սովի պատճառով .
Սաղաղ Նիկոպոլիսն (Շապիհն - Գա-
րախիսար) ալ արձագանք կուտայ սոս-
կալի սովի մը ու անբուժելի հիւան-
դութեան մը տարածման որ արդէն բազ-
մաթիւ երիտասարդներու ծաղիկ կեան-
քը խլած է ու զեռ վտանգը ահաւոր
Նամակագիրները չեն յոգանիլ բը-
նաւ պատմել, «բայց թէ եւ մեզ օգնե-
ցին քանի մը գիւղացիներ, այլեւս ան-
կարող են, սարսափը սոսկալի կերպով
պատած է, նեղութիւնն ու վիշտը, տա-
ռապանքն ու հիւանդութիւնը մեր դու-
ռը ափ առած են . տեսարանը խղճալի է .

ԻՆՉ Է ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նկարագիրը մարդու հագուելն
ընտելեան արմայայտուածն է . Նա
արձագանքն է ներքին մարդուն .
հայելի մը՝ ուրիշ կը տեսնենք մար-
դուն արժանիքը - բուն մարդը իր
ամբողջ բնական գոյներով .
Ի՞նչ է դէկը նաւու, մը ա՛յն է
նկարագիրը մարդուն . անով կը
կառավարուինք, անով կը զարգա-
նանք .
Գիտարին հարց մըն է ճանչ-
նալ մարդը իր արտաքին կերպա-
րանքէն . բայց ահա նկարագիրը այն
գերագոյն միջոցն է, որուն շնորհիւ
կրնանք տեսնել ներքին մարդը .
Կը փափաքէի որ սիրելի ըն-
թերցողը մտքով հետեւէր ինձ հետ
բարձրահայեաց լեւան մը գաղաթը՝
ուրիշ կարելի ըլլար դիտել գիտու-
թեան հեռագիտակով մարդ աշխար-
հը . հոնկէ պիտի տեսնէր բարձրա-
բերձ ծառերուն վրայ հանգչած դը-
րախտի թռչունները և պիտի լսէր
անոնց քայքայուող դալուլիկը, քիչ
անդին պիտի տեսնէր նաև գարնա-
նային անուշաբոյր վարդենիի և ծաղ-
կաւէա թուփերու շուքին ներքեւ սո-
ղուններու և աղուէներու խոռոչ-
ները . քիչ մը հեռունը պիտի տես-
նէր դրախտանման անտառները ի-
րենց հոգեզմայլ տեսարաններով .
Աղէ՛ մի՛ մօտենար, հո՛ն է ահուելի
վազը իր կորեւներովը . հո՛ն է
թաւապատ ծառերուն շուքին ներ-

Ուրիշ յօդուածով մը պիտի ջա-
նամ բացատրել թէ՛ ի՞նչ է հայուն
նկարագիրը .
ԽՈՐԷՆ

ՆԱՄԱԿ ԳԱՅԻՐԵՆ

Նոյնութեամբ կը հրատարա-
կենք յետագայ նամակը, որ Գա-
հրէէն մեղի ծանօթ մէկը զրկած է
ի հրատարակութիւն .
ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՈՂԲԵՐԸ
Այս անգամ ձայն մըն ալ կը լսուի
ահաւոր ձայն, սո՛վ
Կարծես վասպուրականի, Մշոյ,
Արաբիի, Ակնայ, եւ կովկասի Հա-
յաշինջ սովը չէր բաւեր, եւ զեռ չվեր-
ջացած սո՛վ մըն ալ կարձանագրենք .
Ու այս անգամ միեւնոյն յարատեւ
սովի արձագանքն է որ կուգայ, Շա-
պիհն-Գարախիսարէն՝ Պոմպէոսի պատմա-
կան բարձունքէն, լսելի ընելու Արտա-
սահմանի ժողովուրդին որ այլեւս մա-
շած է տալով, փճացած պանդխտու-
թեան մէջ, բայց ինչ ընել, զարձեւ
խնայել ու տալ, այս է մեր պարտա-
կանութիւնը, զփոքութեան ո՛չ մի բառ
ո՛չ մի աղաղակ, նպատակ երկրի ժողո-
վուրդին առանց խտրութեան .
Շապիհն - Գարախիսար գտնէ միակ-
ներէն է որ հազուադիւտ սով տեսած է,

երիտասարդներ գաղթել կուզեն, ար-
զաքներ վզերնին ծոած հաց կը պոտան
ու ձեռնուռայն կտարպուրն լսել:

Ասելորդ կը նկատեմ նամակը շա-
րունակելը որ տխուր լուրերու շարք մէ:
Անհրաժեշտ է որ օգնենք, որով-
հետեւ եղբայրսի գաղթականութեան
դիմած են իրենց հայրենակիցներուն ու
եղբայրներուն:

Գաղաքի շրջակայ գիւղերէն, Չըր-
դըիսի, Անկոյի, Թաւազարայ, Եւպեոյի,
Պուսիսի, Բուրգ, Արարաիս, եւլն թշուա-
ռութեան մասնուած են:

Կիմանանք թէ Գարահիսարցի քա-
նի մը ազգայիններ դիմում ըրած են:
Գեր. Առաջնորդ Ս. Հօր, ըստ օրինի
պաշտօնական ձեւակերպութիւններով
արտօնելու այս առթիւ կազմուելիք
հանգանակիչ մասնախումբի մը՝ զարժա-
նըն ի գործ դնելու համար:

Կը սիրենք յուսալ թէ նորին Գե-
րապատութիւնը պիտի բարեհաճի օ-
ժանգակութեամբ քաջալերելու բարե-
պաշտ ազգայնաց մարդասէր վերաբե-
րութիւնն հանդէպ մեր տառապալ եղ-
բայրներուն:

ՀԱՅՐԵՆԱԿՅԺ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

ԼՈՐԵՆՏ

ՆՈՐ ԱՐՀԵՍՏ

Հաւաստի աղբիւրէ կը տեղա-
կանանք թէ՛ Մայիս 23 ի Շարաթ օ-
րը, կէս օրէ յետոյ ժամը 3 ին ա-
տենները անախորժ միջադէպի մը
տեղի տուած են երեք համարաձայն
հայ կիներ, անչափահաս աղջկան մը
եղբորը բացակայութենէն օգտուե-
լով՝ անոր տունէն ներս մտնելով և
զանազան խաբեպատիր խօսքերով
յաջողելով համոզել աղջկը, որ ի-
րենց հետ միասին առնելով մեկնին:

Աղջկան առարկութիւններուն
թէ՛ « եղբայրս բացակայ է » — որով-
հետեւ եղբորմէն զատ ուրիշ մէկը
չունի — կը պատասխանեն թէ՛ « եղ-
բայրդ վերջը մեզի պիտի գայ և մի-
ասին պիտի վերադառնաք ելն . . . »

Ըսողներ կան թէ սպառնալիք-
ներ ալ ըրած են, սակայն այս պա-
րագան տակաւին հաստատուած չէ,
իսկ ինչ որ ամէն պարագայի մէջ
ստոյգ է, այն է թէ՛ աղջկը Օս-
մանեան հպատակ է . . . եղբր:

Երեկոյն՝ եղբայրը խնդրոյն
բոլորովին անտեղեակ՝ տուն կը վե-
րադառնայ և քրոջը բացակայու-
թիւնը տեսնելով կ'ստիպուի փնն-
տաւորել ելլել և վերջապէս մին-
չև կէս գիշեր հազիւ կրնայ տեղե-
կանալ պատահաբար մեղսակիցնե-
րէն միոյն հանդիպելով: Սակայն
երբ կուզէ քրոջը տուն առաջնոր-
դել, եօթնեակ մը երկուս ընդդի-
մադիրներու սպառնալիքներուն և
արգելքին կը հանդիպի, այնպէս
որ ինքզինքը պաշտպանելու համար
բարեկամներու օգնութեանը կը կա-
րօտի, բայց ի զո՞ր ժամանակը ան-
ցած է և ամեն ոք իր տունը քաշ-
ուած:

Ինզճ տղան մինչև առաւօտ ան-
քուն թափառելէ յետոյ, Առաջնոր-
դարանին կը ծանուցանէ խնդիրը և
մեծ դժուարութիւններով կ'առնուի
աղջկը և իր տունը կը տարուի:

Առաջնորդարանին այս ուղիղ
քայլը մեզի կարգ մը բաներ յիշեց-
նել կուտայ, սակայն հիմայ ատոնց
ժամանակը չէ . . .

Միայն թէ՛ հաստատելով որ
այս կարգի ուրիշ գէպեր ալ հի-
մայ մանուաւնդ՝ յայտնի պատճառ-
ներով . . . հայերուս մէջ քիչ մը
յաճախադէպ են, պարտաւորութիւն
կը համարինք անչափահաս աղջկ-
ներու ծնողքները և պաշտպանները
և մանուաւնդ բարեմիտ մանկամար-
դուհիները զգուշացնել, որ առաջին-
ները աշխուրջ կերպով հսկեն իրենց
զաւակներուն, իսկ վերջիններն ալ
խաբէութեանց և սպառնալիքներու
առջև տեղի չտան . . .

Իսկ ալ ժամանակը հասած կը
նկատենք ուշադրութիւնը հրախրե-
լու Ազգ. Առաջնորդարանին ալ,
նմանօրինակ գէպերու առջևը առ-
նելու հոգածութիւնը ունենալ, կա-
կառավարական տոմարներու մէջ ան-
պատուաբեր արձանագրութիւններ
չ'ընդունու համար հայերու անունին
քով: Ինչ՞ մարդասպանութիւննե-
րէն, կուռներէն և անհաւատարմու-
թիւններէն յետոյ, այսպիսի աղտե-
րէ ազատ մնալն ալ առաւելութիւն
մէ, և Օսմանեան հպատակ ըլլալը
բաւական զօրաւոր պատճառ մը չէ
եղբայրսի հօգին վրայ անպատու
մարդոց սաղարաններէն զերծ չը
մնալու համար:

Վերոյիշեալ խնդրոյն համար
« Արշալոյս » ի Խմբագրութիւնը իր
բարեկամներէն մէկուն յանձնարա-
րած է աւելի մանրամասնութիւն-
ներ քաջել և հանրութեան ուշադ-
րութեանը յանձնել, զգուշացնելու
համար հասարակութիւնը վատաբա-
րոյ կ'նորոններէ, որոնք անմեղ յար-
կերու խաղաղութիւնը կը վրդովեն:
« Արշալոյս » այս մասին բացարձակա-
պէս աններող պիտի գտնուի, յա-
նուն հայութեան համեստունակ բա-
րոյականին:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Անցեալ երկուշաբթի 25 Մայիս
Սայրտա Զէյնապի Գատարանը հե-
տաքրքրական դատ մը վճռած է:
Հայ երիտասարդ մը՝ որ հայ ընտա-
նիքի մը տունը իբր վարձակալ կը
ընակի եղեր, կ'ըսուի թէ՛ չ'դիմա-
նալով տանտիրուհոյն աղջկան չը-
նորհներուն, մեղապարտ յարաբե-
րութիւններ մշակած է, այնպէս որ
իննամսեայ հեռաւորութենէ ճամ-
բորդի մը մեկնման և դաւտեան ա-
ւետիսը կը տրուի մեծապատիւ հօրը:

Կ'ըսեն թէ հայրագիրը կասկած-
ներ պատճառելով կը հրաժարի իր
խօստումէն, զոր կուտայ աղջկան,
նախ քան արգելուած ծառին պը-
տուղէն ճաշակելը, ու ինդիրը դա-
տարին ողջմտութեան կը ձգուի:
Լուսմուս նայելով դատարարը
15 օր պայմանաժամ կուտայ հերոս
զիւսացողին որ հարսանեկան պատ-
րաստութիւնները տեսնէ . . . հակա-
ռակ պարագային մէջ 300 ոսկույ
տուգանք և անպայման ժամանակ
մ'ալ բանտարկուիլը ծանուցանելով:

Չենք գիտեր սակայն թէ այս ա-
զատամիտներ որ առանց իրենց հօ-
րը և եղբորը հրամանին անկասօրէն
կը գործեն, Օսմանեան հպատակ են
քե՛ Գօս նարոյեօնեան . . .

Ասոր մասին ալ անշուշտ ա-
ռիթ պիտի ներկայանայ վիճաբանե-
լու . . .

ԳՈՂՈՒԹԵԱՆ ՄԸ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

« Լա Ռեֆորմ », իր 1906 Սեպտեմ-
բերի թիւերէն միոյն մէջ կը գրէր. Օր
չիայ որ, թիւթերու զանազան լուրերու
բաժնին մէջ՝ գոհարեղէններու գողու-
թեան հետաքրքրական պատմութիւն մը
չ'զանուի: Երբեմն աւազակներու խմբ-
բակցութիւն մէ որ գոհարավաճառի մը
վաճառատունը կը գարակէ. հրեմնի՝
զարմանալու բան, զղեկատէր մը՝ որ իր
հիւրը կ'ամբաստանէ մեծարժէք մատա-
նիի մը անհետացումին համար. երբեմն՝
աղամանազավաճառներու միջնորդ մ'է՝ որ
իրեն վստահուած ծրարը միտանալ առ-
նելով ծովերը կ'անցնի, ու կ'երթայ
հաստատուել յունական քաղաքի մը մէջ
ուրիշ վտարուելու երկիւղը չունի:

Գոհարեղէններու գողութիւնը միշտ
զրգուած է վարպետ գողերու խորժակը
և արգարեւ ուրիշ ու և է գողներէ
աւելի նախընտրելի է այս:

Մեզի պատմութեան նիւթ հայ-
թայթողները սովորական աւազակներ
չեն այս անգամ: Ասոնք վերջին նորա-
ձեւութեան հասուցած են իրենց ար-
հեստը. ու երբ գոհարավաճառի մը խա-
նութիւն ներս կը մտնեն. եղանակին հա-
մապատասխան վարդ մը զարդարած է
իրենց ողջնկորին լամբակը, լաւ հագ-
ւած են առանց մոռնալու ձեռնոցները:

Գոհարեղէն գողերուն յանդգնու-
թիւնը անհամեմատելի է և անոնց համ-
բերութիւնը չափ չունի: Ոճիրներու
պատմութիւնը զանազան չարագործներ
կանուանէ որոնք ամբողջ տարիներ զո-
հած են իրենց ծրագիրը յաջողեցնելու
համար:

Գոհարեղէններու ամենէն նշանա-
ւոր գողը Սպանիացի կին մը եղած է,
որուն զոհերը եղած են, կէս դար առաջ՝
Բարիդի ամենէն հոչակաւոր գոհարա-
վաճառ Մալէթիօ Եղբայրները:

Գողութիւնը տեղի ունեցած է
Մատրիտի մէջ, ուր վերոյիշեալները
ունէին և տակաւին ունին գոհարեղէն-
ներու հոչակաւոր վաճառատուն մը:
Այդ ժամանակներուն մէջ Սպանիոյ
Մայրաքաղաքին մէջ անուանին մե-
ծահարուստ բոխիլ մը կայ եղեր Տօթթօր
Հէրվիօ անունով, որ մասնաւորապէս
ուղեղային հիւանդութիւններ կը զար-
մանէ եղեր:

Իր հոյակապ ապարանքին մէջ,
ուր հաստատած է նաեւ մեծածախ և
չեղ հիւանդանոցը, հարուստ հիւանդ-
ներ միայն կ'ընդունէի:

Առաւօտ մը՝ գեղեցիկ երեկոյններով
լծուած կողք մը Մալէթիօ եղբայրք վա-
ճառատան առջև կանգ կ'առնէ, ուրիշ
զուրս կը ցատկէ սիրուն կին մը և գո-
հարներու ցուցադրանքին հետաքրքիր
ակնարկ մը նետելէ յետոյ՝ վաճառատու-
նէն ներս կը մտնէ:

« Պարոններ կ'ըսէ՛ երկու եղբայրնե-
րէն մէկուն, ես Տօթթօր. Հէրվիօն կ'ընեն
եմ եւ կ'եղած եմ օժիտի վերաբերեալ
զանազան առարկաներ գնելու աղջկանս
համար, որ մօտ օրէն պիտի մուսնաց-
նենք, ես Ձեր վրայ վստահութիւն ու-
նիմ. սակարկել չեմ ուղեր. միայն
ընտրած առարկաներուս վերջին գինը
ըսէք »:

Քիչ ժամանակուան մէջ այցելուներն
մինչև երկու հարիւր հազար ֆրանգ
արժող առարկաներու ընտրութիւնը
կ'ընէ, և՛

— Հիմայ կը փախաբէի որ, կը յաւե-
լու այս գոհարեղէնները ամուսինս ալ
տեսնէ, կը հաճիք անոնք իմ տունս
զրկել կամ աւելի լաւ է ինձի հետ կողք
նստիլ և այս խնդիրը չուտով մը կար-
գադրել:

Պ. Մալէթիօ ընտրուած գոհարները
տուփի մը մէջ կը զեանդէ և իր գոր-
ծակատարին կը յանձնէ և նշանագի կը
հասկցնէ որ ճամբան տուփը չ'բացուի:
Կողքը կը սլանայ և քառորդ ժամ
մը յետոյ Տօթթօր. Հէրվիօի ապարան-
քէն ներս կը մտնէ:

Կինը կ'ընդունուի ամենախորին
յարդանքներով, և իրեն ընկերացող
գործակատարին հետ շեղորէն զարգար-
ւած սրահ մը կ'առաջնորդուի ուր՝ տու-
փը գործակատարին ձեռքէն անհեղձ
կըսէ կեղծ Տօթթօրուհին:

— Նրթամ կ'ըսէ այս գոհարները ա-
մուսինս ցոյց տալու և վարկեանէ
մը կը վերագրուամ:

Եւ ստուգիլ նա բժշկին աշխատա-
նոցէն ներս կը մտնէ:

— Պարոն, կ'ըսէ փորձառու և կ'իս-
նական բժշկին, ես Պարոնուհի Զ. . .
եմ, զաւակս՝ որ զուրք կ'սպասէ, քու
խնամոցդ յանձնելու բերի. խեղճ աղան
հալածուելու մոլութեանէն բռնուած է
(délire de la persécution) կը կարծէ
թէ՛ ինք գոհարավաճառ Պ. Մալէթիօի
գործակալն է և և ի՞նչ իր բաթօնին ի-
րեն վստահած գոհարեղէնները կը գող-
նան իրմէ: Դժբաղդ աղաւ Ձեր ողածու
խնամոց պիտի յանձնեմ, խնդրելով որ
զինքը բժշկէք:

— Անմիջապէս պիտի քննեմ զինքը
պատասխանեց մեծանուն բժիշկը, և
ճառայ մը կ'անչելու համար զանգակը
հնչեցուց, մինչ անդէն կեղծ Զ. . .
Պատուհինի ձեռքէն բռնելով աղաչան-
քով մը:

— Ո՛չ, ո՛չ, չեմ ուղեր որ իմ ներ-
կայութեանս տեղի ունենայ քննութիւ-
նը: Զաւակս յստակատեսութեան վայր-
կեաններ ունի. կրնայ ըլլալ որ իր ար-
ցունքները և պաղատանքները իմ վը-
րայ աղեղնութիւն ընեն և չ'կարենամ
բաժնուիլ անկէ: Պիտի խնդրէի նոյն
իսկ որ, յարեց հեծկողալով, թոյլ տա-
նք ինձի մեկնիլ, առանց անոր կա-
կած արթնցնելու: Ես այլ եւս զաւա-
կըս առողջանալէ առաջ տեսնել չեմ ու-
ղեր, որովհետեւ կը խօստանաք բժշկել
զինքը, այնպէս չէ՛:

Բժիշկը հաւանութիւն յայտնելէ
յետոյ այցելուէիէն գումար մը ստացաւ
մէկ ամուսան զարմանումի համար և
տարաբաղդ կ'ընր ծածուկ դռնէ մը գուլս
հանեց:

Ժամ մը յետոյ Պ. Մալէթիօի գոր-
ծակատարը բժիշկին աշխատանքն
ներս մտնելով, հարցուց թէ գոհարե-
ղէններուն ընտրութիւնը կատարած է:
— Ի՞նչ ընտրութիւն. հարցուց Տօթ-
թօրը:

— Բայց այն ծանրագին առարկանե-
րը՝ որ Ձեր աղջկան հարսանեաց օժի-
տին համար բերուեցան:

— Ո՛վ էք ուրեմն. սիրելի բարեկամ:

— Պ. Մալէթիօի գործակատարն եմ:

Բժիշկը ժպտեցաւ, հասկնալով որ
գժբաղդ Պատուհինի զաւակին հետ զէ՛մ
առ զէ՛մ կը գտնուի:

— Ընտրութիւնս: Լաւ. այդ մասին
վաղը պիտի խօսինք:

— Այն ատեն, Պարոն, հաճեցէք գո-
հարեղէնները վերադարձնել:

— Անոնք, զորս մեկնող յանձնե-
ցի և պէտք է որ ընդհուպ բաթօններ-
ուս վերագրուան:

Բժիշկը կը շարունակէր ծիծաղիլ.
Իսկ Մալէթիօ եղբայրք գործակատարը
ձայնը կը բարձրացնէր՝ այնպէս որ
Տօթթօրը (խեղճ Տօթթօր . . .) վախնալով
թէ կատաղութեան նսպակէ մը բռնուած
է խօսակիցը, զանգակը հնչեցուց և
չորս սպասաւորներ ներս մտնելով հա-
ղիւ իմն զսպիցին « Հիւսնդ » ըր բռնա-
բաճկոնով (camisole de force) կ'ապկը-
պելով:

Երեկոյ եղաւ, Պ. Պ. Մալէթիօ եղ-
բայրք իրենց գործակատարին ուշանա-
լէն կասկածներու ենթարկուելով ստի-

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԽԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, աժէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատնին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստպար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

Հուն : Հոն կը համբերէ սարկաւազը, սակայն վանք գառնալէն յետոյ կը յանդիմանէ լուսարարի օգնականը, որ կրկին լուսանքներով կը պատասխանէ սարկաւազին, որ ձեռքով հասկցնել կը փորձէ ինչ որ խօսքով չէր կրցած հասկցնել : Լուսարարի օգնականը կը բողբէ Լուսարարապետին, որ սարկաւազին՝ Ս. Ստեփաննոսի աւանդատունն ուրարը ձգելու գացած պահուն ետեւէն կը հասնի և հոն սարկաւազը կենթարկուի նկարագրուած վիճակին : Ուխտաւորներ և մէկ քանի վարդապետներ հազիւ հազ կը յաջողին խեղճ սարկաւազն ազատել Լուսարարապետին ձեռքէն, քե՛ն յենն սրակալի ուրիշներ ալ որ աւելի ըր բարեպատէ համարելով իրենք ալ քանի մը հարուած կուտան սարկաւազին : Սարկաւազը այն օրէն ց'այսօր կրկին և կրկին բողբած է Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին, Մանկունի Սրբազանին և Տնօրէն ժողովին . սակայն անլսելի մնացած է : Լուսարարապետին երկրակից է Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին անձնական սպասաւորին, (տխրահուշակ Աւետիսը) ուստի այս վերջինը չուզեր որ Տ. Յարութիւն Ս. Պատրիարք գիտակցի խնդրոյն :

Միւս կողմէն, լուսարարապետն իրողութիւնը խեղաթիւրելով բողբած է Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին և Տնօրէն ժողովին : Տնօրէն ժողովն առանց քննութեան որոշած է սարկաւազը Ս. Յարութիւն զրկել առանց վերաբրկուի, այսինքն ամենախիստ պատիժի ենթարկած է : Սարկաւազը բողբած է և չէ մեկնած վանքէն, յետոյ այլոց միջնորդութեամբ, խնդիրը փակելու համար խնդրած է որ գէթ վերաբրկուով Ս. Յարութիւն երթալու արտօնուի, սակայն մերժուած է : Տնօրէն խորհուրդը նկատելով որ Մանաւեան սարկաւազ չի հնազանդիր իր որոշման, հրամայած է վանքէն հեռացնել սարկաւազական աստիճանով :

Մանաւեան սարկաւազ ճարահատ որոշած է հեռանալ վանքէն և անցագիրն հանելով, հաւանական է որ քայ Պօլիս Ազգային վարչութեան առջև կրկնելու համար իր բողբները, որոնք լսելի չէին եղած Երուսաղէմի մէջ :

ՏՕՔՔ ԵՍՔԷՐ Լ. ՃԷՔՕՊԵԱՆ

ՇԱՐՍ. ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ. ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցներու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաջողակ վերահատ նկատկային առանց ցաւ պատճառելու :

Մտնկարարձուհի և մասնագէտ՝ կանանց ծննդական գործարաններու և ակրոգիտեան արտերու, իսկ մանուկներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու :

Կատարեալ խնամքով և գիտական նորագոյն մեթոտներու շնորհիւ հիւանդապէս կը բժշկէ իր խնամոց յանձնուած հիւանդները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կիս օրէ յետոյ ժամը 2-5

Սմէն երեւոթքի աղբասոց ձրի դարձանում :

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԻՐ

« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէրիք բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին Պ. Արշակ Զօպանեանի հետեւեալ հեղինակութիւնները .

- 1. Բեթուածներ Գին 5 ֆր.
2. Մկրտիչ Պէշկիթաչեանի կեանքն ու գործը Գին 5 ֆր.

ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ՄՍՏԵՆԱԴԱՐԱՆԸ

- Թիւ 1 Թըքուհին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »
« 3 Սուլթան Համիտ Ինչպէս մեռաւ Գին 1 ֆրանց

Ազգային սահմանադրութիւն սակաւաթիւ օրինակներ Գին 12 ղրշ .

ՎԻՃԱԿԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՄԱԿԱՆ ՁԻՆԱՆՇԱՆԻ

ՄՍՍԲ ՀԱՅՄԱՅԱՆ

ՄԵՏԱՔՍՈՎ ԲԱՆՈՒՍԾ 400 քիւէ քարկացած ԹԻՒԸ 5 ՂՐՇ . ՈՂՁ

Մեծ սրճարան Հայկականի մէջ ի ցոյց դրուած սոյն անման մետաքսեայ ձեռագործի վիճակահանութիւնը՝ որուն անցեալ Փետրուար ամսոյ մէջ տեղի ունենալը ծանուցուած էր, բայց ինչ ինչ պատճառներով յետաձգուած է . անոնք որ սոյն չքննող զարգը ունենալ կը ցանկան, ժամ առաջ թող զիմեն « Արշալոյս » ի տպարանը Տ. Գէորգ Փափաղեանի մնացեալ սակաւաթիւ տոմսերէն գնելու համար, որմէ անմիջապէս յետոյ տեղի պիտի ունենայ վիճակահանութիւնը Հայկական սրճարանի մէջ կանխաւ ծանուցուելով .

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿՍԵՍՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալաքի փողոց . Խաղէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից


Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՆԱՃԱՒԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վիսայակն եւ մեքայնեով վարձատրուած, Երաշխատեալ մեխանիկ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ Փարիզի 1900 ի Տիեզերական արտեսահանդիսին մէջ ստացած է . ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՏՄՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ յատկանշիմ



Գին 20 ՓԱՒՈՐ

ՍՍՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեխանիկ, փոփոխաճեղճեղ եւ կազի վաւարաններու :

Տասներկու տարին « Սինկեր » ընկերութեան քով մեքենայարարութեան զբաղելէ յետոյ, այժմ զինավաճառ Զախարիա Գոնտարիսի քով պաշտօնեայ է գէնքերու եւ մեքենայարարման ճիւղին մէջ :

Կարգ մը բարեկամ յաճախողներու խնդրանոց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագոյ ժամերը պիտի արամազրէ կարի մեքենաներու, ֆոնօկրաֆոններու, կաղի վառարաններու, նորոգութեանց եւ յարդարման :

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան գիմել իր տունը Պապը - Շէրիքի կողմը Եարա Պէշկալա՝ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, եւ գարձեալ զիւրութեան համար քարթ բուսալով մը կրնան գիմել « Արշալոյսի » Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը եւ Տունին թիւը :

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ եւ փորձեր կատարուելէ յետոյ :

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ : Գին 19 - 50

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐՍ. ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԷ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զըծին վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատնին միակն է որ ապրանքներու թարմութեան եւ մաքրութեան շնորհիւ մնայուն զիրք մը բռնած է տարիներէ ի վեր :

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր ինչ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատնեան մէջ :

Մեր յաճախողները գո՛ր թողելու նպատակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան եւ գնումին առեն շատ խնամք եւ նոյն իսկ բժախտորութիւն կը ներք : Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է եւ մաքուր մեր քով :

Կշիռը, որուն համար ուրիշ շատ սեղեր գանդատանց պատճառ տուած է, մեր քով գոնուանկութիւն միայն տուած է . վկայ մեր բազմաթիւ յաճախողները, որոնք միշտ գո՛ր մնացած են :

Ձեր սոսնիս նպարեղէնի բոլոր պէտքերուն համար գիմեցէք ի Պապ-Էլ-Խալէ՛ մեր վաճառատնին եւ չ'պիտի զղջաք : 16-41 ԿԱՐԱՊԵՏ ԳՍԱՐՁԵԱՆ